

**4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ**

**4.1. Վճարային հաշվեկշիռը 2017 թվականին**

Ըստ նախնական տվյալների, 2017 թվականին ԱՀ վճարային հաշվեկշռի<sup>1</sup> ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 11522,7 մլն դրամ, որը 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 33853,5 մլն. դրամով:

**ԱՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը 2016-2017թթ.**

*/մլն դրամ/*

	2016թ.	2017թ.	Բացարձակ փոփոխությունը
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎ</b>	<b>-45376,2</b>	<b>-11522,7</b>	<b>33853,5</b>
Կրեդիտ	86546,3	136292,2	49745,9
Դեբետ	131922,5	147814,9	15892,4
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-82244,9</b>	<b>-50607,5</b>	<b>31637,4</b>
Կրեդիտ	46134,3	93791,4	47657,1
Դեբետ	128379,2	144398,9	16019,7
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	<b>-79560,0</b>	<b>-58086,4</b>	<b>21473,6</b>
Կրեդիտ	38853,7	75488,3	36634,6
Դեբետ	118413,7	133574,7	15161,0
<i>Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի</i>	<i>-79560,0</i>	<i>-58086,4</i>	<i>21473,6</i>
Կրեդիտ	38853,7	75488,3	36634,6
Դեբետ	118413,8	133574,7	15160,9
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-2684,9</b>	<b>7478,9</b>	<b>10163,8</b>
Կրեդիտ	7280,5	18303,1	11022,6
Դեբետ	9965,4	10824,2	858,9
Տրանսպորտ	-4097,0	-3261,1	835,8
Կրեդիտ	2441,4	2010,4	-431,0
Դեբետ	6538,4	5271,6	-1266,8
Ճանապարհորդություն	-1670,7	-3783,8	-2113,1
Կրեդիտ	1088,5	1120,8	32,3
Դեբետ	2759,2	4904,6	2145,4
Այլ	3082,8	14523,9	11441,1
Կրեդիտ	3750,6	15171,9	11421,3
Դեբետ	667,8	648,0	-19,8
<b>ՄԿՁԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	<b>-1619,9</b>	<b>-2696,3</b>	<b>-1076,4</b>
Կրեդիտ	1724,5	323,9	-1400,6
Դեբետ	3344,4	3020,3	-324,1
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	<b>38488,6</b>	<b>41781,1</b>	<b>3292,5</b>
Կրեդիտ	38687,5	42176,9	3489,4
Դեբետ	198,9	395,8	196,9
<b>ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎ</b>	<b>11236,7</b>	<b>4884,5</b>	<b>-6352,2</b>
Կրեդիտ	11236,7	4884,5	-6352,2
Դեբետ	0,0	0,0	0,0
<i>Չուտ վարկավորում(+)</i> զուտ փոխառություն(-) ընթացիկ և կապիտալի հաշիվներից	<i>-34139,6</i>	<i>-6638,3</i>	<i>27501,3</i>
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎ</b>	<b>-43276,8</b>	<b>-24387,8</b>	<b>18889,0</b>
<i>Չուտ վարկավորում(+)</i> զուտ փոխառություն(-) ֆինանսական հաշիվից	<i>-43276,8</i>	<i>-24387,8</i>	<i>18889,0</i>
<b>Ուղղակի ներդրումներ</b>	<b>-1866,4</b>	<b>-1353,9</b>	<b>512,5</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0	0,0	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	1866,4	1353,9	-512,5
<b>Պորտֆելային ներդրումներ</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0	0,0	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	0,0	0,0	0,0
Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0,0	0,0	0,0
<b>Այլ ներդրումներ</b>	<b>-41410,4</b>	<b>-23033,9</b>	<b>18376,5</b>

	2016թ.	2017թ.	Բացարձակ փոփոխությունը
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	146731,0	202503,7	55772,7
Չուտ պարտավորությունների ստանձնում	188141,4	225537,6	37396,2
<b>Պահուստային ակտիվներ</b>	0,0	0,0	0,0
<b>Չուտ սխալներ և բացթողումներ</b>	<b>-9137,3</b>	<b>-17749,5</b>	<b>-8612,2</b>

<sup>1</sup> ԼՂՀ ԱՎԾ 2015թ-ից սկսած իրականացրել է վճարային հաշվեկշռի վերահաշվարկ համաձայն ԱՄՀ կողմից առաջարկվող վճարային հաշվեկշռի ձեռնարկի նոր հրատարակության՝ «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի (BPM-6) մեթոդաբանական պահանջի: Ըստ նոր BPM-6 ձեռնարկի փոփոխություններն իրականացվել են ինչպես դասակարգչային, այնպես էլ մեթոդաբանական առումով: **Դասակարգչային առումով** իրականացվել են հետևյալ հիմնական փոփոխությունները: Նախկին 2 հաշիվների՝ ընթացիկ հաշվի և կապիտալի ու ֆինանսական հաշվի փոխարեն այժմ հաշվեկշիռը կազմված է 3 հաշիվներից՝ ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ և ֆինանսական հաշիվ: Իր հերթին ընթացիկ հաշիվը ներկայումս կազմված է 3 ենթահաշիվներից՝ ապրանքների ու ծառայությունների (նախկինում դրանք առանձնացված էին), սկզբնական եկամուտների (նախկինում՝ եկամուտների) ու երկրորդային եկամուտների (նախկինում՝ ընթացիկ տրանսֆերտներ) ենթահաշիվներից: Փոփոխվել է ֆինանսական հաշվում ակտիվների և պարտավորությունների հաշվառման կարգը: Ներմուծվել են «ակտիվների զուտ ձեռք բերում» և «պարտավորությունների զուտ ստանձնում» տերմինները: Ֆինանսական հաշվի հողվածները գրանցվում են զուտ հիմքով յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության մասով, այսինքն նրանք արտացոլում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր կրեդիտային և դեբետային փոփոխությունները: Այսպիսով դրական զուտ փոփոխությունը նշանակում է ակտիվների կամ պարտավորությունների աճ, իսկ բացասականը՝ ակտիվների կամ պարտավորությունների նվազում:

Վճարային հաշվեկշռում ներկայացված ապրանքների առևտուրը տարբերվում է արտաքին առևտրի վիճակագրության տվյալներից: Մասնավորապես, արտաքին առևտրում ներմուծումը ներառվում է ՄԻՖ գներով (ներառում են ապրանքի գինը, ապահովագրության և բեռնափոխադրման ծախսերը մինչև ներմուծող երկրի սահման), իսկ վճարային հաշվեկշռում՝ ՖՕԲ գներով (ներառում են ապրանքի գինն ու հարակից ծախսերը մինչև արտահանող երկրի սահման):